Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի կեսաբանություն /22 դասաժամ/, երաժշտություն/3 դասաժամ/ և կերպարվեստ/4 դասաժամ/ առարկաների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում/Ձև1/,

-մեկ լուսանկար 3*4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/, /միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ/,

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/և աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից,

-ինքնակենսագրություն /Ձև 5/,

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ,

-Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն/մասնակցած լինելու դեպքում/

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ

առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ,ամեն օր՝ժամը 10:00-ից մինչև 16:00-ն,բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 25-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ.Ծովակ ,առաջին փողոց, 1-ին նրբանցք, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝093-13-33-63 հեռախոսահամարով: